Ժողովրդական տոների նկարագրությունը բերում է այն եզրակացության, որ նրանց հաջորդականությունը և նրանց հետ շաղկապված սովորությունները հաշվի էին առնում արևի ընթացքը և աչքի առաջ ունեին մարդկանց այդ ընթացքի վրա այս կամ այն ուղղությամբ ներգործելու հնարավորությունը։ Զանգեզուրում էլ, ինչպես և այլ հայաբնակ գավառներում, լուսնի փազաների փոփոխությունը ոչ մի ձևով չէր անդրադարձել ոչ տոների, ոչ էլ նրանցից անբաժան պասերի, մատաղների և այլ սովորությունների վրա։ Մինչդեռ թվում է, թե լուսնի պաշտամունքը այս կամ այն ձևով պիտի հետքեր թողած լիներ այստեղի կենցաղի մեջ, քանի որ Զանգեզուրը մոտիկ հարևան էր պատմական Աղվանքին, որտեղ, ըստ Ստրաբոնի[66], թեև պաշտվում էին նաև արևն ու Զևսը, սակայն ամենից ավելի պաշտելի էր լուսինը։ Լուսնի պաշտամունքի աչքի զարնող հետքեր Զանգեզուրում չեն նկատվում։ Չեն նկատվում նույնիսկ լուսնի պաշտամունքի՝ Անահիտի այն քրիստոնեական ձևափոխությունը, որն այնքան ուժեղ աչքի է ընկնում Հայաստանի այլգեղծական շրջաններում, օրինակ՝ Արարատյան դաշտում, որտեղ ուխտատեղի համարվող եկեղեցիների մեծագույն մասը նվիրված էր մանուկը ձեռքին պահող Աստվածածնին՝ Անահիտի քրիստոնեական փոխանորդ սրբին։ Արարատյան դաշտի ձախակողմյան գետահովիտների ստորին մասերում, որոնք հնուց այլգեղծության տնտեսական գոտի են կազմում, ամենուրեք՝ սկսած Աշտարակից մինչև Ագուլիս, Աստվածածնին նվիրված տաճարներ են, որ և հրաշագործ էին համարվում, և մարդուն ամենայն բարօրություն տվող։ Զանգեզուրի գյուղական եկեղեցիների շարքում շատ աննշան տեղ են գրավում Աստվածածնի անունը կրող կառույցվածքները և Աստվածածնի տոնը, որը հատկապես զուգորդված է խաղողի հասունանալու օրերի հետ, առանձին հանդիսավորությամբ չի կատարվում։ Զանգեզուրում ոչ մի վայր չկա, որը նվիրված լինելով Աստվածածնին՝ այդ օրը գրավեր ուխտավորների քիչ շատ նշանավոր հոսանք։ Չկար նաև Աստվածածնի հրաշագործ պատկեր, որը նման լիներ օրինակ Լենինականի Յօթը վէրք Աստվածածնի պատկերին։ Անկարելի է լուսնի պաշտամունք համարել այն սովորությունը, որ Նորալուսինն առաջին անգամ տեսնողը շտապում էր նրան ուղղել իր իղձերը՝ հավատացած լինելով, որ դրանով առաջ է բերելու և նրանց կատարումը, կամ լուսնին ոսկեդրամ ցույց տալ իր ոսկիների շատանալու հույսով։ Այս գործողությունները բխում էին ոչ թե անմիջապես լուսնի պաշտամունքից, այլ այն մտայնությունից, որ սկզբնավորությունով պայմանավորվում է և նրա շարունակությունը, որ, օրինակ, շաբաթասկզբին, երկուշաբթի օրը մեկին պարտք տալը առիթ է դառնալու ամբողջ շաբաթվա ընթացքում ուրիշին պարտք տալուն։ Իղձերը նորալուսնին ուղղելով՝ նորալուսնի լրանալու հետ կապվում էր և իղձերի իրագործումը։ Ոսկիները նորալուսնին ցույց տալով՝ հավատում էին, որ լրացումի հետ միասին լրանալու են, շատանալու են և ոսկիները։

Նորալուսնին մի որոշ զորություն հատկացնելու հանգամանք պետք է համարել այն սովորությունը, երբ լուսնոտության դեմ միջոցներ ձեռք առնելու համար հագուստի վրա էին կարում մանիկաձև կտրած ոսկե կամ արծաթե դրամի կտոր։ Այս նպատակով գնում էին այն տան ներկայացուցչի մոտ, որի

66 XI, 4, 7։